ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2024 թվականի ապրիլի 10-ին կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04-2» պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) 2024 թվականի հունիսի 26-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունները պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, Պայմանագրով նախատեսված աշխատանքների համար հատկացվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն՝

- Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 4-ը հաստատվել է նոր խմբագրությամբ:
- Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 60 օրացուցային օր:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 8.5 և 8.13 կետեր

Պատվիրատու՝ Դատական դեպարտամենտ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

10.04.2024թ. ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 26 » հունիսի 2024թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Գալստյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Օ. Ավագյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները և հիմք ընդունելով 10.04.2024թ. կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04-2» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր)՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հաշվի առնելով Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Հրազդանի նստավայրի՝ ք. Հրազդան, Միկրոշրջան թաղ. 13-րդ փ. 1/1 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների անհրաժեշտությունը, ինչպես նաև Կապալառուի կողմից ներկայացված կատարվելիք աշխատանքների (այսուհետ՝ Աշխատանք) նախահաշիվը (այսուհետ՝ Նախահաշիվ) և Պայմանագրով սահմանված 80000000 (ութսուն միլիոն) ՀՀ դրամ առավելագույն գնից՝ համաձայն հաստատված Նախահաշվի 18731000 (տասնութ միլիոն յոթ հարյուր երեսունմեկ հազար) ՀՀ դրամի չափով ֆինանսական միջոցների առկայությունը.

1.1 Պայմանագրի «ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» վերտառությամբ հավելված N 4-ը հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Աշխատանքների կատարման ժամկետ սահմանել Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից՝ 60 օրացուցային օր:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը՝ 14.05.2024թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում Կապալառուի կողմից կատարված աշխատանքների դիմաց վճարումն իրականացվում է Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2. Համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է N 1 համաձայնագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Դատական դեպարտամենտ	«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1	Հասցե՝ ք. Հրազդան, Քաղսի 4թղմ. 88
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 03022928
Հ/Հ՝ 900011025757	Հ/Հ՝ 163158050159
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
Ղեկավարի պարտականությունները կատարող՝ Ն. Գալստյան	**Տնօրեն՝ Օ. Ավագյան**
(ստորագրություն) Հ.Տ.	(ստորագրություն) Հ.Տ.

Հավելված N 1
«26» հունիսի 2024թ. կնքված N 1 համաձայնագրի

(Հավելված N 4
« 10 » « 04 » 2024թ. կնքված
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/04-2» ծածկագրով պայմանագրի)

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ընդամենը
2	45461100/510	շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ /Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարչական շենքերի ընթացիկ նորոգման աշխատանքներ/							18731000	18731000	18731000	18731000	18731000	18731000	18731000

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դարական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011025757
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Ղեկավարի պարտականությունները
կատարող՝ Ն. Գալստյան

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ԱՎԱԳ-ՇԻՆ» ՍՊԸ
Հասցե՝ ք. Հրազդան, Քաղսի 4թղմ. 88
ՀՎՀՀ՝ 03022928
Հ/Հ՝ 163158050159
«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Տնօրեն՝ Օ. Ավագյան

(ստորագրություն) Կ.Տ.